

և ասանկով որ և է տեսակ ընկերութեան արդիւնքը կրնանքը վայելել։

Եթէ մէկ գերդաստանի մը անդամքը, կամ որ և է ընկերութեան անձինքը, և կամ քաղաքի մը և ազգի մը ժողովուրդը այս կանոններուն հետևելով իրենց ընկերութեան գործողութեանց մէջ մտնեն, երանի այն գերդաստանին, այն ընկերութեան և ազգին. վասն զի այս աշխարհիս մէջ խաղաղութիւն կը թագաւորէ մէջերնին, և ապահովութեամբ իրենց հանդերձեալ յաւիտենական երջանկութիւնն ալ ձեռք կը ձգեն։

Հ. Պ. Վ. ՄԻԱՍՆԵԱ

Տան մը տնտեսութեան վրայ հարկացոր գիտելիք։

Պատկերներու և հայելիներու ոսկեզօծ շրջանակները երբ աղտոտած ըլլան փոշիէ և ճանճերու աղտեղութենէ, զանոնք մաքրելու համար առ 30 տրամ օղի ու մէջը խառնէ փրփրցնելով մէկ տրամ ճերմակ օճառ. ու բարակ լաթի կտորուանքէ կծիկ մը ըրած մէջը թաթիսէ ու անով թեթև մը շփէ ոսկեզօծ շրջանակները. ու ետքը աղէկ մը ցամքեցու առանց շփելու՝ կակուղ բամբակով։

Ոսկեզօծ շրջանակ մը, կամ որ և իցէ զարդ՝ ճանճի աղտէ աղատ պահելու համար՝ բարակ մը վրան քսէ զարնիի եղ, ուսկից ճանճը կը խորչի. Եւ թէ որ դարնիի եղ չգտնուի, եփած պրասի ջուրն ալ նոյն ուժն ունի. պաղելէն ետքը քսելու է. Այս թէպէտ ոսկեզօծ փայլունութեանը չվսասեր, բայց այս անտեղութիւնը ունի որ պրասին անախորժ հոտը կը տարածուի սենեկին մէջ։

Երբ տպած պատկերի մը թուղթը հինցած ու դեղնած ըլլայ, ճերմկցընելու ու նորցնելու մէկհատիկ ապահով ճամբան այս է: Կտաւ ճերմկցնելու կանոնով պատկերը տար կանաչով ծածկուած շիտակ գետնի մը վրայ փոէ, և

երկու բարակ ճիւղեր խաչաձե վրան դիր՝ ծայրերէն հաստատելով, որ թուղթը հովէն չարժի, ու վրան անձրևի պէս ջուր ցրցքնէ ու թող. երբ արևէն կը չորնայ, նորէն ցրցքնէ վրան. այսպէս օրուան մէջ երկու իրեք անդամ. և այսպէս ցորեկուան արևը և գիշերուան ցողը ուտելով թուղթը՝ բոլորովին կը ճերմկնայ: Եւ զայս քանի մը օր շարունակելու է ինչուան որ աղէկ մը ճերմկնայ թուղթը. ետքը մամից մէջ դնելու է որ առջի շտկութիւնը ստանայ: Այս ճամբով գրքի մըն ալ սեցած թղթերը կը նայ ճերմկցուիլ:

Եղով քաշած գունաւոր պատկերները ջանալ մաքրելը վտանգաւոր է. մանաւանդ երբ աղնիւ քաշած պատկերը ըլլայ. անոր համար լաւագոյն է պատկերահանի տալ որ մաքրէ: Բայց շատ սեցած պատկեր մը չափաւոր կը մաքրուի օճառի ջրով քիչ մըն ալ աղ մէջը խառնած: Այս փրփուրը տարածէ պատկերին երեսը ու թող. փրփուրը ցամքելէն ետքը՝ թաց սպունգով մը սրբէ պատկերը: Դարձեալ երկու մաս լաւ օղի և մէկ մաս բևեկնի խիժ (գիրէմէնդին) խառնէ, ու ասով սրբէ պատկերը:

Ենեակները ճանճէ աղատ պահելու համար քիմէական թուղթ կամ ուրիշ թիւնաւոր նիւթեր կը գործածեն. բայց լաւագոյն ճամբան է մաքրութիւնը. որովհետև մաքրուր տեղուանք ճանճերը չեն յաճախեր: Իսկ խոհանոցը, մարանը, սեղանատունը և ասոնց նման տեղուանքը ճանճէ աղատ պահելու համար, պատուհաններուն պղնձի թելէ կամ դերճանէ հիւսուած վանդակ անցու. որուն ծակերուն խոշորութիւնը մատի հաստատութեամբ ըլլայ՝ բաւական է. այն վանդակներուն ծակերէն ներս փորձուած է որ ճանճը չանցնիր: Պատճառն ալ յայտնի է. որովհետև ճանճը թըռչըտելով ուժով մը հեռուէն կու զայ ներս մտնալու, ու երբ կը մօտենայ՝ տեսնելով որ օղը թելերով արգելուած է, չկրնալով համարձակ ներս մտնել՝ ետ կը դառնայ:

Լուէն աղատ ըլլալու գլխաւոր դեղն

է մաքրութիւնը . լուերուն շատնալուն պատճառ փոշին է . լուն մարդու արեամբը կը մնանի , փոշոյ մէջ կը շատնայ : Թէ որ խուցի մը մէջ լաթեղէնները մաքուր ըլլան , և ամենկին փոշի չըլլայ , այն խուցին մէջ լու չըլլար , եղածն ալ քիչ ատենէն կը ջնջուի : Լուերը բնակութիւն չեղած տեղն ալ , երբ մաքուր պահուած չէ , ողջ կը մնան և կը շատնան , և նոր բնակիչ գացողին վրայ բազմութեամբ կը յարձկին : Լուուր բնակարանը մաքրելու համար առաջին կարսորն է աղէկ մը լուալ ու մաքրել բնակարանը . և եթէ պէտք ըլլայ՝ սաստիկ ծխախոտի մուխ ընել խուցին մէջ , որով կը սատկին լուերը :

Լուերը շան և կատուի վրայ խիստ կը շատնան . զանոնք լուէն ազատելու համար ռետինը (չամախըրզին) բարակ փոշի ըրէ՝ ու այն փոշով շիէ կենդանույն մորթը երբեմն : Դարձեալ՝ ծխախոտը եփէ ու անոր ջրոյն մէջ շունը լուա . բայց այն ջրէն հանելուդ պէս մէկէն ուրիշ զաղջ ջրոյ մէջ աղէկ մը լուա կենդանին՝ որ թիւնաւորուելու վտանգ ըլլայ :

Մըսկները ջարդելու մէկ հատիկ հընարքն է ծծմբի ծուխ տալը , որ ամեն ծակ կը մտնէ ու անոնց ծուերն ալ կը սպաննէ : Նախ խուցէն դուրս հանէ երկաթէ և պողպատէ բան մը եթէ գըտնուի խուցին մէջ . և երկու կամ իրեք ամաններով դիր խուցին մէջ ծծմբի կը տորուանք , և այնչափ տաքցու՝ որ սկրսին վառիլ ծծումբները , և պատուհաններն ու դռները գոց թող ինչուան տասը ժամ . յետոյ բաց պատուհաններն ու երկու իրեք ամանով կիր անուշադրով խառնած և քիչ մը տաքցուցած դիր խուցին մէջ քիչ մը ատեն գոց պատուհաններով . ու ետքը նորէն առջի ըրածիդ պէս ծծումբները վառէ թող տասը ժամ . ու նորէն բաց պատուհաններն ու դարձեալ անուշադրով կիրը տաքցուցած դիր քիչ մը ատեն . ու անկէ ետև բաց պատուհաններն ու թող որ խուցը աղէկ մը հովահրի : Երկու իրեք օր այսպէս հովահրելէն ետև կրնաց

բնակուիլ : Այսպէս երկու անգամ մէջ ընդ մէջ տաքցուցած կիր դնելուն պատճառն է՝ որ չըլլայ թէ ծծումբը լաթերուն մէջ թափանցելով , զանոնք փըտեցընէ :

Այս մըսկներուն ջնջելուն յարմար ժամանակն է յուլիս և օգոստոս ամիսներն որ ատեն որ ձուերը բոլոր ելած կ'ըլլան , և աւելի դիւրաւ կը ջնջուին :

Իսկ նախապահեստ զգուշովթեան համար՝ երբ նոր տուն կը շինուի , կամ երբ պատերը կը նորոգուին , երեսի ծեփին մէջ պէտք է խառնել փոշի դառնիծ վարունգի , (coloquinte) , որ սաստիկ թոյն է մըսկներու : Նոյնպէս պատերը ներկելու ատեն ներկին մէջ պէտք է խառնել նոյնը . և թուղթ փակցընելու ատեն խիւսին մէջ խառնել . որուն չափն է մէկ ոխա ջրոյն մէջ տասուերկու տրէմ փոշի . նոյն չափով ալ մէկ ոխա խիւսին մէջ և մէկ ոխա պատրաստած ներկին մէջ :

Մայիս .

Են ոմանք որ 'ի ցրտային և 'ի գիւյյին լերինքն գտնկուածս տնկոց 'ի մայիսոյ մտէն մինչ 'ի յունիսի երեքտասան օրն առնեն . և գիտելի է որ լաւն այն է , որ զամեն ազգ տունկ յառաջ քան զպտկելն է պարտ տնկել , զարդել¹ 'ի թզենւոյն . որ զայն եթէ յառաջ տնկես՝ թէ յետև լինի : Եւ են ոմանք որ զայգիքն թողուն՝ պտկէ , և ապա տնկեն , նոյնպէս և զպատրուսելն . զի ջուր ծառանց՝ զերդ սոսինձ լինի դարձել . բայց մեք յառաջինն և կանուխն եմք հաւան . և այլքն 'ի հետ պտկելոյն փորձ արին և պատրուսեցին , նա եղել զի սղալեաց : Եւ զպատրոյսն՝ թէ 'ի լերմային տեղւոյն 'ի ցուրտն կամենաս , դու քաղէ և 'ի ճառայ² դիր . և զբերանքն կալ , և 'ի հիւթ գետին թաղէ , մինչեւ բանուի ցրտայինն և իւր ժամն

¹ Զատ 'ի , բաց 'ի :

² Կարաս , հողէ աման :